«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 12251 «03» 09 2019թ.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցները:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների:

Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա տնօրենության նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 12252 «03» 09 2019թ.

Ի. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել սեպտեմբերի 2-ից:

2. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել ս/թ դեկտեմբերի 28-ին:

3. Առաջին ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել ս/թ հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 02-ը:

4. Երկրորդ ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել ս/թ դեկտեմբերի 23-28-ը:

5. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել ս/թ դեկտեմբերի 23-28-ը:

6. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել 2020թ. հունվարի 08-29-ը:

7. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ) և անվանական ցուցակները՝ զեկուցագրի ձևով, մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը ներկայացնել ՈւՄՎ: Մաս-մաս վճարման դեպքում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել երկու ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

8. Ակադեմիական պարտքերի մարման շրջանը կազմակերպել՝

ա) առաջին լուծարքային շրջան՝ 2020թ. փետրվարի 06-15-ը ժամանակահատվածում,

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ 2020թ. փետրվարի 20-29-ը ժամանակահատվածում:

9. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել 2020թ. փետրվարի 10-ից:

10. Ուսումնական պլաններով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաներն սկսելուց 20 աշխատանքային օր առաջ Ուսումնամեթոդական վարչության ՄԿՊԿ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների հրամանների նախագծերը:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>ՍԵՊՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև ս/թ սեպտեմբերի 06-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ բաժին ներկայացնել 30-ից բարձր անապահովության միավոր ունեցող ուսանողների տվյալները (տեղեկանք սոցիալական անապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկանք):
- Մինչև ս/թ սեպտեմբերի 09-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ ներկայացնել տվյալներ երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակի վերաբերյալ՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը):

- Մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը ներկայացնել ուսանողական նպաստներ և կրթաթոշակներ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքի արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 13-ը ներկայացնել ամռանն անցկացված ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 13-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման առաջին կուրսերի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ երկու օրինակից՝ դեկանի մակագրությամբ:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 13-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման երկրորդ կուրսերի ուսանողների հետ կնքված մանկա-վարժի լրացուցիչ որակավորման համար պայմանագրերը՝ երկու օրինակից:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների փաստաթղթերը:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 25-ը ներկայացնել 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 25-ը ներկայացնել պետական կրթաթոշակ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 3-ԳՄ /ՀԿ/ հաշվետվությունը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 2-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը:

ՆՈՅԵՄԲԵՐ

- Ս/թ նոյեմբերի 01-ից մինչև նոյեմբերի 07-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Ս/թ նոյեմբերի 08-ից մինչև նոյեմբերի 14-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Ս/թ նոյեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 30-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Մինչև ս/թ դեկտեմբերի 2-ը ներկայացնել երկրորդ ընթացիկ քննությունների ժամանակացույցը:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 6-ը ներկայացնել առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

ՀՈՒՆՎԱՐ

- Մինչև 2020թ. հունվարի 18-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակը:
- Մինչև 2020թ. հունվարի 30-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳԿՎ ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և հաշվետվության 34 ձևը:

II. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

- Հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքներն իրականացնել ս/թ նոյեմբերի 1-29-ը,
- Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ) և անվանական ցուցակները՝ զեկուցագրի ձևով, մինչև 2020թ. հունվարի 17-ը ներկայացնել ՈւՄՎ: Մաս-մաս վճարման դեպքում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել 2 ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:
- 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննություններն

ու ստուգումներն անցկացնել ս/թ դեկտեմբերի 7-21-ը, իսկ երկրորդ ընթացիկ քննություններն ու ստուգումները՝ 2020թ. հունվարի 10-18-ը:

- Առաջին կիսամյակի ստուգարքներն անցկացնել 2020թ. հունվարի 20-ից մինչև 27-ը, իսկ քննաշրջանը՝ փետրվարի 3-ից մինչև 29-ը ժամանակահատվածում:
- Ակադեմիական պարտքերի մարման շրջանը կազմակերպել՝

  ա) առաջին լուծարքային շրջան՝ 2020թ. մարտի 06-14-ը ժամանակահատվածում,

  բ) երկրորդ լուծարքային շրջան՝ 2020թ. մարտի 20-28-ը ժամանակահատվածում:
- 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել 2020թ. մարտի 09-ից:
- Ուսումնական պլաններով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաներն սկսելուց 20 աշխատանքային օր առաջ ՄԿՊԿ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների հրամանների նախագծերը:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>ՍԵՊՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև ս/թ սեպտեմբերի 06-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 30-ից բարձր անապահովության միավոր ունեցող ուսանողների տվյալները (տեղեկանք սոցիալական անապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկանք):
- Մինչև ս/թ սեպտեմբերի 09-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ ներկայացնել տվյալներ երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակի վերաբերյալ՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը):
- Մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքի արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 13-ը ներկայացնել ամռանն անցկացված ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ՄՄՊՈՒՀ-ի շրջանավարտների հետ կնքված պայմանագրերը՝ երկու օրինակից՝ բաժնի վարիչի մակագրությամբ:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկա-

յացնել ՄՄՊՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

- Մինչև ս/թ սեպտեմբերի 25-ը ներկայացնել 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքները:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Մինչև ս/թ հոկտեմբերի 01-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 3-ԳՄ /ՀԿ/ հաշվետվությունը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 11-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ ներկայացնել հեռակա ուսուցման առաջին կիսամյակի դասատախտակը:

ՆՈՅԵՄԲԵՐ

- Ս/թ նոյեմբերի 01-ից մինչև նոյեմբերի 07-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Ս/թ նոյեմբերի 08-ից մինչև նոյեմբերի 14-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ նոյեմբերի 16-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Մինչև ս/թ նոյեմբերի 16-ը ներկայացնել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը:
- Մինչև ս/թ նոյեմբերի 22-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առաջին կուրսերի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ երկու օրինակից՝ բաժնի վարիչի մակագրությամբ:
- Ս/թ նոյեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 30-ը Ուսումնամեթոդական վարչության ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները:

ՀՈՒՆՎԱՐ

- Մինչև ս/թ հունվարի 10-ը ներկայացնել առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**